ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՀԵՌԱԳԻՐԸ ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ՀՈՎՀԱՆՆԵՍ-ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ՝ ՎԻՐԱՀԱՏՈՒԹՅԱՆ ՀԱՋՈՂ ԸՆԹԱՑՔԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ
ՀՈՎՀԱՆՆԵՍ ՊՈՂՈՍ Բ ՊԱՊԻՆ

ՎԱՏԻԿԱՆ

Նորվեգիա՝ պաշտոնական այցելության ճանապարհին լսեցինք Ձերդ Սրբության վիրահատության հաջող ընթացքի լուրը:

Երեկ Ս. Էջմիածնում մենք աղոթեցինք Ձեր քաջառողջության համար:

Այստեղ, Ամստերդամում, Օսլո մեկնելուց առաջ, աղոթք ենք վերառաքում առ Աստված, որ Ձերդ Սրբությանը պարգևի շուտափույթ և կատարյալ ապաքինում, քանզի Ձեր առողջությունը թանկ է ողջ աշխարհի հավատացյալների համար:

Անհամբեր սպասում ենք Ձերդ Սրբության հետ հանդիպմանը:

Եղբայրական սիրով ու սրտակցությամբ՝

ԳԱՐԵԳԻՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ամստերդամ,
8 հոկտեմբերի 1996 թ.

Գարեգին Ա Վեհափառ Հայրապետը, Սուրբ Էջմիածին վերադառնալուց հետո, Նորին Սրբություն Հովհաննես-Պողոս Բ Պապին վերստին բարեմաղթության հեռագիր հղեց՝ հիվանդանոցից դուրս գալու առթիվ: